ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ORIENTAL STUDIES, ВОСТОКОВЕДЕНИЕ

ՔՐԴԱԼԵԶՈՒ ՄԱՄՈՒԼԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ (2020-2023թթ.) (Kurdistan24, Rûdaw) *

ՀՏԴ 070:93/94 *DOI: 10.52063/25792652-2025.2.25-196*

ՍԱԹԵՆԻԿ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ
Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի
իրանագիտության ամբիոնի հայցորդ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
tarverdiansatenik@gmail.com
ORCID: 0009-0007-9608-2483

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել Արցախյան երրորդ պատերազմի և դրան հաջորդած իրադարձությունների վերաբերյալ քրդալեզու մամուլում հրապարակված հոդվածները: Հոդվածում ներկայացված են քրդերենի հյուսիսային բարբառով՝ կուրմանջիով, հրապարակված հոդվածների մշտադիտարկման արդյունքները:

Նպատակն իրականացնելու համար խնդիր է դրվել ուսումնասիրելու Իրաքյան Քրդստանի հիմնական լրատվական կայքերում (Kurdistan24, Rûdaw) հրապարակված հոդվածների բովանդակությունը, հոդվածագիրների եզրակացությունները՝ հաշվի առնելով այս կայքերի բարգանիական և թալաբանիական ուղղվածությունը: Խնդիրներից մեկն է նաև ուսումնասիրել, թե որքանով են հոդվածագիրները հիշատակել «Կարմիր Քրդստանի» մասին՝ հաշվի առնելով դրա՝ Արցախի տարածքում լինելու հանգամանքը:

Աշխատանքը հիմնված է բովանդակության որակական, խոսույթի քննական, իմաստաբանական վերլուծության և համեմատական մեթոդների վրա:

Այս աշխատանքի արդիականությունը ապահովվում է այն փաստով, որ քրդական մեդիան արձագանքել է Արցախում տեղի ունեցող պատերազմական գործողություններին և ակտիվորեն հրապարակումներ կատարել, իսկ այս հոդվածը հայկական գիտական դաշտում այդ հրապարակումների ուսումնասիրությունն է:

Ուսումնասիրությունը կատարելով՝ եզրահանգել ենք, որ քրդական հանրությունը շարունակում է հետաքրքրվել Արցախի տարածքում հայ-ադրբեջանական բախումներով, Թուրքիայի ներգրավվածությամբ, հարցի նկատմամբ միջազգային հանրության վերաբերմունքով և որոշակի կարծիք փոխանցել մեդիայի հրապարակումների մակարդակով, ինչպես նաև այդ թեմայի շուրջ տեղեկատվություն ապահովել քրդական հանրության համար: Որոշ հոդվածներում Արցախի տարածքում Սովետական Միության ժամանակաշրջանում գոյություն ունեցող, այսպես կոչված, «Կարմիր Քրդստանին» անդրադառնալով, հակիրճ ներկայացնելով՝ նրանք ցույց են

* Հոդվածը ներկայացվել է 12.05.2025թ., գրախոսվել՝ 04.08.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.09.2025թ.:

տալիս, որ, թեպետ պատմության մեջ կարճ կյանք ունեցող քրդական «ինքնավարության» (1923-1929), այն գոյություն է ունեցել և շարունակում է «կենդանի մնալ» ժամանակակից քրդերի հասարակական և քաղաքական խոսույթում:

Հիմնաբառեր՝ *քրդալեզու լրատվական կայքեր, Արցախյան երրորդ պատերազմ, Լեռնային Ղարաբաղ, «Կարմիր Քրդստան», սիրիացի զինյալներ, թուրքական ներգրավվածություն, ադրբեջանական հարձակում, հակամարտություն, ռազմական գործողություններ:*

Նախաբան

Քրդալեզու մամուլում Արցախյան երրորդ պատերազմի վերաբերյալ տասնյակ հոդվածներ կան: Անկասկած, կախված լրատվական կայքի որոշակի կողմնորոշումից, հոդվածագրի ներկայացրած նյութը ևս ունենում է տարբերվող դիրքորոշում: Այս հոդվածում ներկայացված են Kurdistan24, Rûdaw լրատվական կայքերի՝ անգլերենով և կուրմանջիով հրապարակված հոդվածների մշտադիտարկման արդյունքները Արցախյան երրորդ պատերազմի (27. 09. 2020 – 09/10. 11. 2020), 2022թ. դեկտեմբերի 12-ին Ադրբեջանի կողմից Արցախի շրջափակման, դրան հաջորդած իրադարձությունների և 2023թ. սեպտեմբերի 19-ին Ադրբեջանական Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ լայնամասշտաբ հարձակման մասին: Թեև 2020թ. Արցախյան պատերազմից հետո արվել են դրա տարբեր ասպեկտներին նվիրված մեծ թվով ուսումնասիրություններ (Hovsepyan and Tonoyan, Davtyan, Miarka, Hecht, Lantzov, Gamaghelyan and Rumyantsev, Bivainis, Meibodi and Feizollahi, Petrosyan, Angelov, Dadparvar and Azizi), սակայն դրա համատեքստում կան նաև այնպիսի թեմաներ, որոնք չեն դարձել ուսումնասիրության առարկա: Այդօրինակ թեմաներից է այդ պատերազմի առնչությամբ քրդական մամուլի ուսումնասիրությունը, որին նվիրված է այս հոդվածը:

Գիտակցելով քրդալեզու մամուլի առատությունը՝ վերոնշյալ լրատվական կայքերը ընտրվել են Իրաքյան Քրդստանում՝ ըստ իրենց առաջատար լինելու հանգամանքի: Հաշվի առնելով Իրաքյան Քրդստանում Բարզանիների և Թալաբանիների ազդեցիկ քաղաքական դիրքը՝ այս հոդվածը շեշտը դրել է իրենց «ազդեցության» տակ գտնվող լրատվական կայքերի վրա, քանզի առանց քրդական այս ուժերի՝ հատկապես Բարզանիների թողտվության, Արցախյան երրորդ պատերազմի և դրան առնչվող իրադարձությունների վերաբերյալ հոդվածներ չէին հրապարակվի: Լրատվական երկու կայքերն էլ, ըստ որոշ շրջանառվող լուրերի, վերահսկվում և ֆինանսավորվում են Իրաքյան Քրդստանի տարածաշրջանային կառավարության ներկայացուցիչների՝ Բարզանիների և վերջիններիս՝ Քրդստանի դեմոկրատական կուսակցության կողմից, թեպետ դրանց մասին կայքերում նշված չէ, ինչպես օրինակ՝ Rûdaw[1] լրատվական կայքում նշված է դրա՝ անկախ լրատվական հաստատություն լինելու մասին: Դրանց գլխավոր շտաբները գտնվում են Էրբիլում և հրապարկում տարածաշրջանային և միջազգային լուրեր կուրմանջի, սորանի, անգլերեն, թուրքերեն, արաբերեն լեզուներով, իսկ Kurdistan24-ը[2]՝ նաև պարսկերեն: Ինչ վերաբերում է Թալաբանիների շահերը ներկայացնող PUKmedia կայքին, ապա այն ևս ուսումնասիրվել է, սակայն որևէ հոդված չի գտնվել Արցախյան երրորդ պատերազմիև դրան հաջորդող իրադարձությունների մասին:

[1] Համանուն ընկերությունը գործում է 2008թ. -ից, իսկ որպես լայն սոցիալական մեդիա կայք՝ 2013թ. -ից (“Rûdaw”):

[2] Ըստ որոշ աղբյուրների կայքը գործում է 2015թ. -ից, թեպետ դրա մասին կայքում նշված չէ (“Kurdistan24”):

Այս աշխատանքը հնարավորություն կտա ուսումնասիրողներին հասկանալու, թե որքան ուշադրություն է դարձվում Արցախյան հիմնախնդրին (2020-2023թթ. միջակայքի վերաբերյալ) քրդական քաղաքական որոշ շրջանակների կողմից: Պարզ է դառնում, որ վերջիններս հետաքրքրված են Արցախում կատարվող իրադարձություններով՝ հայ-ադրբեջանական ռազմական գործողությունների համատեքստում: Պետք է նաև անուշադրության չմատնել քրդալեզու հոդվածներում «Կարմիր Քրդստանի» վերաբերյալ հիշատակումները:

Մեր հոդվածը կունենա շարունակություն, քանզի այստեղ չեն ընդգրկվել քրդական լրատվական մի շարք կայքերի հոդվածների մշտադիտարկման արդյունքները, որոնք ևս պակաս կարևոր չեն, ուսումնասիրության ծավալուն լինելու պատճառով դրանք կներկայացվեն հաջորդ հոդվածներում:

Kurdistan24

Kurdistan24-ը մշտադիտարկման ենթարկելիս առաջին հոդվածը, որը հետաքրքրություն առաջացրեց, 2015թ. դեկտեմբերի 20-ին կուրմանջիով հրապարակված Ֆիդր Ալոյանի զոհվելու մասին հոդվածն էր, որում հոդվածագիրը գրում է. «Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանին ազերիների հարձակման հետևանքով զոհվել է Հայաստանի եզդի քուրդ: Ադրբեջանը կրակ է բացել Ղարաբաղի սահմանին Հայաստանի ուժերի վրա»: Հղում տալով «Ռյա Թազա» թերթի խմբագիր Մրազե Ջամալի ֆեյսբուքյան հայտարարությանը՝ նշված է, որ զոհվածը19-ամյա Ֆիդար Ալոյանն է (Kurdistan24, *Leşkerekî Kurd di êrîşa Azerbeycanê de hat kuştin*): Հետաքրքիր է, որ կայքում խոսք չկա Արցախյան (2016թ.) քառօրյա պատերազմի ժամանակ զոհված Քյարամ Սլոյանի մասին, որ գլխատվել էր Ադրբեջանական բանակի զինվորականների կողմից (Ստեփանյան):

Արցախյան 3-րդ պատերազմի վերաբերյալ առաջին հոդվածը կայքում հրապարակվել է 2020թ. սեպտեմբերի 28-ին՝ «Հայաստանի և Ադրբեջանի միջև պատերազմը վնաս է հասցնում Թուրքիային» վերնագրով: Հոդվածագիրը գրում է, որ Ադրբեջանը ուշադրություն է հրավիրել Լեռնային Ղարաբաղի տարածքի վրա, որն ունի կառավարություն և ամուր կապեր Հայաստանի հետ, ինչպես նաև 90%-ով հայ բնակչություն: Հոդվածագիրը նշում է, որ Հայաստանի և Ադրբեջանի միջև լարվածությունը եվրոպական շուկաներ էներգամատակարարման համար կարող է խնդիրներ առաջացնել: Վերջինս, նաև անդրադառնալով Թուրքիայի և Ադրբեջանի միջև էներգետիկ հարաբերությունների ընդլայնմանը, գրել է, որ դեպի Թուրքիա ադրբեջանական գազը տեղափոխող Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարը անցնում է Հայաստանի Տավուշի սահմանային մարզով, որտեղ տեղի են ունենում մարտեր (Kurdistan24, *Şerê navbera Ermenistan û Azerbaycan zirarê dide Tirkiyê*):

Վերոնշյալ հոդվածի հրապարակումից մոտ մեկ ժամ անց կայքը հրապարակեց («Ռյա Թազա» թերթից) Թեմուրե Խալիլի հետ հարցազրույցը: Ըստ որի՝ Ռուսաստանը փորձում է հանդարտեցնել այս պատերազմը, բայց անհրաժեշտության դեպքում նա կաջակցի հայերին: Խոսելով պատմության մասին՝ նա նշել է, որ Լեռնային Ղարաբաղը (Qerebaxa Çiya) հայկական հող է՝ ավելացնելով. «Սակայն երբ այն Լենինի ժամանակաշրջանում մտել է Ադրբեջանի կազմի մեջ՝ որպես ինքնավար տարածք, տարբերություն չկար, դա երկիր էր, որտեղ ապրում էինք մենք, Ադրբեջանն ու Հայաստանն էլ այդ երկրի մեջ էին: Բայց մեր այդ երկրի փլուզումից հետո հայերն ասացին, որ մեր այս հողը, որը ներառվել է Ադրբեջանի տարածքում, մենք կվերադարձնենք: Այնտեղ 95%-ով հայեր են, այսինքն՝ նրանք իրավունք ունեն իրենց հողն ունենալ առանց ադրբեջանցիների վերահսկողության: Հայերը դուրս բերեցին այն Ադրբեջանի կազմից, և այն հայերի ձեռքում է ավելի քան 20 տարի»: Ըստ Խալիլի՝ պատերազմը Հայաստանի և Ադրբեջանի միջև չէ, այլ Ղարաբաղի և Ադրբեջանի, իսկ, քանի որ Ղարաբաղը հայկական երկու պետություններից մեկն է, Հայաստանը օգնում է իր ազգին, սակայն Թուրքիան հեռահար ծրագրեր ունի տարածաշրջան մտնելու, այն

իր վերահսկողության տակ վերցնելու: Խալիլը ավելացրել է, որ 100 տարի առաջ էլ նրանք ոչնչացրին հայերին, և պատերազմը շարունակվում է մինչ օրս (Kurdistan24, *Têmûrê Xelîl: Rûsya hewl dide şerê Ermenistan û Azerbaycanê rawestîne*):

Շուտով հրապարակվեց ՀՀ 4-րդ նախագահ[1] Արմեն Սարգսյանի՝ CYBERSEC-2020 համաժողովում ունեցած ելույթի բովանդակության վերաբերյալ հոդվածը: Հոդվածագիրը գրում է, որ Արմեն Սարգսյանը հայտնել է, որ պատերազմում Թուրքիան Ադրբեջանին աջակցում է F-16 կործանիչներով, ինքնաթիռներով, անօդաչու թռչող սարքերով, զինվորականներով: Հոդվածագիրը նշում է. «ՀՀ նախագահը ուշադրություն հրավիրեց Թուրքիայի կողմից իրականացված հայերի ցեղասպանության վրա»: Kurdistan24-ի տվյալ հոդվածագիրը հոդվածի վերջում եզրակացնում է. «Ղարաբաղը փաստացի գտնվում է Հայաստանի վերահսկողության տակ: Իրավականորեն այն պատկանում է Ադրբեջանին: Ահա թե ինչու, տասնամյակներ շարունակ Հայաստանի և Ադրբեջանի միջև առկա է ռազմական և քաղաքական ճգնաժամ » (Kurdistan24, *Ermenîstan bo NATO*):

Ժամեր անց կայքում տեղադրվեց ՀՀ պատգամավոր Կնյազ Հասանովի[2]՝ Kurdistan24-ին տված հարցազրույցը: Վերջինս նշել էր, որ Թուրքիան աջակցում է Ադրբեջանին իր զինվորականներով և սիրիացի ընդդիմադիր զինյալներով: Պատգամավորը հայտնել է. «Բացի թուրք զինվորներից, Թուրքիան Աֆրինից Ադրբեջան է տեղափոխել մոտ 4000 սիրիացի ընդդիմադիր և իսլամիստ զինյալներ» (Kurdistan24, *Parlementerê Ermenistanê*):

2020 թվականի սեպտեմբերի 29-ի երեկոյան կայքը այս անգամ հրապարակեց Ռուստամ Բաքոյանի հարցազրույցը: Kurdistan24-ին տված իր հարցազրույցում Բաքոյանը[3] նշել է, որ Թուրքիայի զինվորները կռվում են Հայաստանի դեմ որպես Ադրբեջանի զինվորներ: Նա հայտնել էր, որ Ադրբեջանը ռմբակոծել է սահմանակից քաղաքները, բնակավայրերը, որի արդյունքում սպանվել են քաղաքացիական անձինք, իսկ Թուրքիան ահաբեկիչներ (ԴԱԵՇ-ից, սիրիական ընդդիմությունից) է Սիրիայից բերել Ադրբեջան: Նա նշել էր. «Հայաստանը գտնվում է իր սեփական հողի վրա: Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հողն է, Թուրքիայի հավակնությունները շատ հեռու են գնում» (Kurdistan24, *Rûstem Bakoyan*):

Թեպետ կայքի հոդվածագիրները փոձել են խուսափել թեմայի վերաբերյալ կողմնակալ մեկնաբանություններից, սակայն հարկ է նշել, որ հրապարակել են նաև հայտարարություններ, որոնք ունեն հստակ դիրքորոշում: Նման հոդվածներից է Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի հայտարարությունը: Վերջինս հայտարարել էր, որ Թուրքիայի քաղաքականությունը տարածաշրջանում, Հայաստանի և Ադրբեջանի միջև պատերազմում վտանգավոր է: Հոդվածում նշվել էր նաև, որ Թուրքիայի արտգործնախարարը հայտնել է, որ Ֆրանսիայի նախագահը չի ճանաչում Ադրբեջանի օկուպացված տարածքը, ինչը նշանակում է, որ նա աջակցում է օկուպացիային: Հոդվածագիրը գրել էր, որ, ըստ Մակրոնի, թուրք պաշտոնյաների հայտարարությունները ցույց են տալիս, որ նրանք պատերազմ են ուզում, և որ այս քաղաքականությունը վտանգավոր է տարածաշրջանի համար (Kurdistan24, *Macron*):

Կայքը ակտիվորեն հրապարակում էր հոդվածներ Արցախում տեղի ունեցող իրադարձությունների մասին: Սեպտեմբերի 30-ին հրապարակվեց Հայաստանի ՊՆ հայտարարությունը, ըստ որի Ադրբեջանը Ղարաբաղում ռազմական

---

[1] Հոդվածում առկա է ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի լուսանկարը, հավանաբար շփոթություն է եղել ՀՀ երրորդ և չորրորդ նախագահների լուսանկարների հետ կապված:

[2] ՀՀ ԱԺ պագամավոր, 2007 թվականից «Հայաստանի քրդական ազգային խորհուրդ» ՀԿ խորհրդի նախագահն է, խորհրդի «Զագրոս» հայերեն պաշտոնաթերթի գլխավոր խմբագիր (հասարակական կարգով) (Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, պաշտոնական կայք):

[3] ՀՀ ԱԺ պատգամավոր, 2007թ. «Շամս» հայ-եզդիական երիտասարդական շարժման համահիմնադիր, 2014թ.՝ նախագահ (Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, պաշտոնական կայք):

գործողությունների հրամանատարությունը հանձնել էր Թուրքիային, այդ թվում՝ անօդաչու թռչող սարքերի ու F-16 կործանիչների կառավարումը: Կայքը մեջբերել էր ՀՀ ՊՆ մամլո խոսնակի հայտարարությունը. «Մեր տեղեկությունների համաձայն՝ այդ ինքնաթիռները հրամաններ են ստանում Թուրքիայի արևելքում գտնվող Էրզրում-Կարս տարածաշրջանային հրամանատարական կենտրոնից» (Kurdistan24, *Ermenistan*):

Պատերազմի հենց առաջին օրերից կայքը սկսեց հրապարակել նաև սիրիացի զինյալներին Լեռնային Ղարաբաղ բերած Թուրքիայի միջամտության մասին: Հիմնականում հղում տալով Մարդու իրավունքների սիրիական մշտադիտարկման կենտրոնին՝ ժամանակ առ ժամանակ կայքը տեղադրեց հոդվածներ՝ զինյալների ԼՂ տեղափոխման, նրանց թվի, վիրավորների, սպանվածների և Թուրքիայի կողմից նմանատիպ գործողությունների կազմակերպման և այդ թեմայի նկատմամբ միջազգային հանրության արձագանքի մասին: Այս թեմայի շուրջ մեզ հանդիպած առաջին հոդվածը հրապարակվել է հոկտեմբերի 1-ին, որը հաղորդում էր սիրիացի ընդդիմադիր 62 զինյալի վիրավորվելու կամ անհետ կորչելու և 28 զինյալի սպանվելու մասին: Ըստ հոդվածի՝ նրանց մարմինները տեղափոխվել են Թուրքիա: Հոդվածը, հղում տալով ՄԻ Սիրիայի մշտադիտարկման կենտրոնին, գրում է, որ Թուրքիան 850 սիրիացի զինյալ է տեղափոխել Ղարաբաղի մոտակայք (Kurdistan24, *28 çekdarên Sûrî di şerê Qerebaxê de hatin kuştin*):

Ֆրանսիայի նախագահ Մակրոնի հայտարարության հոդվածի հրապարակումից ժամեր անց՝ Լեռնային Ղարաբաղ ուղարկված զինյալների մասին մեկ այլ հոդված հրապարկվեց, ըստ որի՝ Ֆրանսիայի նախագահը հայտնել էր, որ, իր ունեցած տեղեկություններով, Թուրքիան Սիրիայում կռված ջիհադիստական խմբավորումներ է ուղարկել ԼՂ-ի դեմ կռվելու: Հոդվածագիրը գրում է, որ Մակրոնը նաև մեղադրել է Թուրքիային Հայաստանի և Ադրբեջանի միջև պատերազմ հրահրելու և Լեռնային Ղարաբաղի նկատմամբ վարած քաղաքականության մեջ: Հոդվածում նշվում է նաև, որ Կրեմլի խոսնակ Դմիտրի Պեսկովը ևս հայտարարել էր, որ Սիրիայում կռվող զինյալներին գումարով ուղարկում են տարածաշրջան (Kurdistan24, *Macron*):

Kurdistan24-ը Արցախյան 3-րդ պատերազմի առաջին օրերին հրապարակում էր միջազգային մամուլում հրապարակվող հայտարարություններ, որոնցից էր Ռուսաստանի կոչով ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի, Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի և ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի՝ Լեռնային Ղարաբաղում հակամարտության սրումը դատապարտող համատեղ հայտարարությունը (Kurdistan24, *Ji Trump, Macron û Pûtîn bangaweziya Qerebaxê*):

Իսրայելում ՀՀ դեսպանի հետ կանչվելու մասին հոդվածը շատ չուշացավ, և հայկական լրատվամիջոցներում հոկտեմբերի 1-ի երեկոյան հրապարակվելուց հետո՝ հոկտեմբերի 2-ին՝ վաղ առավոտյան, կայքը գրեց. «Հայաստանը դատապարտում է Իսրայելին»: Հոդվածում նշված էր, որ ՀՀ ԱԳՆ խոսնակ Անանա Նաղդալյանը հայտարարել է, որ Ադրբեջանի հետ ռազմական թշնամանքի[1] մեջ գտնվելու պահին Իսրայելի կողմից Ադրբեջանին զենքի վաճառքը մտահոգության տեղիք է տալիս և անընդունելի է: Հոդվածագիրը հոդվածի վերջում հիշեցրել էր. «2020թ. սեպտեմբերի 27-ին՝ կիրակի օրը, կրկին պատերազմ սկսվեց Լեռնային Ղարաբաղի շրջանում Հայաստանի և Ադրբեջանի միջև: Երկու երկրների միջև ընթացող այս պատերազմը համարվում է տարածաշրջանի ամենավտանգավոր պատերազմը վերջին 20 տարիների ընթացքում» (Kurdistan24, *Ermenistan rexne li Îsraîlê dike*):

[1] Սույն հոդվածում հոդվածագիրը օգտագործել է dijminahiya serbazî արտահայտությունը, որում dijminahi (ya-ն ձայնավորով վերջացող իգական սեռի բառերի վերջավորությունն է իզաֆեթային կառույցում) բառը, ըստ Կուրդոևի, նշանակում է թշնամություն, իսկ serbazî բառը՝ ռազմական (տե՛ս Курдоев, 701, 212), մինչդեռ, ըստ հայկական լրատվական կայքերի հրապարակումների, Նաղդալյանն օգտագործել է «լայնածավալ ագրեսիա» արտահայտությունը:

Նույն օրը կայքը հրապարակեց ևս մեկ հոդված, որում ներկայացված է ՀՀ ՊՆ հայտարարությունն ու տեսանյութը Լեռնային Ղարաբաղում ադրբեջանական ռազմական ուղղաթիռի խոցման վերաբերյալ (Kurdistan24, *VÎDEO – Ermenistanê dîmenên têkbirina helîkoptereke Azerbaycanê belav kir*):

Հոկտեմբերի 2-ին՝ երեկոյան, այս անգամ հրապարակվեց Կանադայի հայտարարությունը՝ Թուրքիային զենք վաճառելու վերաբերյալ: Նշվում է, որ Կանադայի ԱԳՆ հայտարարել է, որ Թուրքիային զենքի վաճառքը կդադարեցվի, եթե պարզվի, որ դրա օգտագործումը մարդու իրավունքների ոտնահարման պատճառ է դառնում: Հոդվածագիրը նաև նշել է, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը կանադական ՁԼՄ-ներին տված հարցազրույցում հայտարարել է, որ ՆԱՏՕ-ի կազմում Թուրքիայի դաշնակիցները պետք է բացատրեն, թե ինչու են թուրքական F-16 կործանիչները ռմբակոծում Ղարաբաղը և սպանում խաղաղ բնակիչներին և նշել, որ ադրբեջանական կողմից կռվում են Մերձավոր Արևելքից բերված Թուրքիայի հովանավորության ներքո գտնվող ահաբեկիչներ (Kurdistan24, *Kanada*)[1]:

Շուտով Kurdistan24-ը հրապակեց “The Guardian” թերթի հոդվածը և մեջբերեց. «Թուրքիան սիրիացի զինյալներին տեղափոխում է Ադրբեջան բեռնատար ինքնաթիռներով: Այն կնքում է 3-6 ամսվա պայմանագրեր և վճարում 10 հազար լիրա»: Kurdistan 24-ն այս հոդվածը գրեթե ամբողջությամբ վերցրել էր “The Guardian” թերթի նույն հոդվածից, և մեջբերել այդ զինյալներից մի քանիսի հարցազրույցը, որոնք պատմել էին, որ տեղեկացված չեն եղել պատերազմում կռվելու մասին և նրանց ասվել է, որ աշխատելու են նավթի և գազի կենտրոններում (Kurdistan24, *Şerê Qerebaxê!*):

Նույն օրը Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի՝ թվիթերյան (ներկայումս՝ X) գրառումը, որով վերջինս հայտնել էր, որ ադրբեջանական բանակը Մատաղիսում (ադրբեջանական անվանումը Madagiz, ներկայումս՝ Suqovuşan) բարձրացրել է ադրբեջանական դրոշը, հայտնվեց նաև Kurdistan24-ի հոդվածների կողքին (Kurdistan24, *Ilham Aliyev*):

Kurdistan 24-ը անգլերենով առաջին հոդվածը արցախյան մարտերի մասին հրապարակեց 2020թ. հոմտեմբերի 3-ին: Ըստ հոդվածի՝ Լեռնային Ղարաբաղում հայ-ադրբեջանական հակամարտությունը լուսաբանող Le Monde թերթի ֆրանսաքուրդ լրագրող Ալլան Կավալը ռեպորտաժ պատրաստելիս վիրավորվել է: Ըստ հոդվածի՝ Լրագրողների պաշտպանության կոմիտեն (ԼՊԿ), հղում տալով լրատվամիջոցներին, նշում է, որ Կավալը և 3 լրագրողներ վիրավորվել են Խոջավանդ քաղաքում, Ադրբեջանի հրածգության ժամանակ, «Ադրբեջանից անջատված Լեռնային Ղարաբաղ շրջանում»: Ըստ Հերմինե Վիրաբյանի՝ ԼՊԿ-ին տված հեռախոսային հարցազրույցի, լրագրողները վիրավորվել են Press վերտառությամբ մեքենայի կողքին կանգնած, նրանց վիրահատել են Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաք Ստեփանակերտում: Հոդվածում նաև գրվում է, որ Ալլան Կավալը, որ քուրդ ակադեմիկոս Մուսա Կավալի որդին է, լուսաբանել է քրդական հարցը և ԴԱԵՇ-ի դեմ պատերազմը Սիրիայի հյուսիս-արևելքում և Իրաքում՝ ներառյալ Իրաքյան Քրդստանի շրջանը: Հոդվածում նշվում է, որ Ադրբեջանը հերքել է մամուլի ներկայացուցիչներին միտումնավոր թիրախավորելու փաստը: Հոդվածագիրը գրում է. «Լեռնային Ղարաբաղը հիմնականում հայերով բնակեցված շրջան է, սակայն այն գտնվում է Ադրբեջանի կազմում և միջազգայնորեն ճանաչված է որպես Ադրբեջանի մաս: Տարածաշրջանը անկախություն է հռչակել 1992 թ. հունվարին՝ Խորհրդային Միության փլուզումից հետո, որի մաս էին կազմում նաև Հայաստանն ու Ադրբեջանը: Հռչակագրից հետո երկու ազգերի միջև տարածաշրջանի շուրջ հակամարտության արդյունքում զոհվել է 30,000 մարդ: Նրանք 1994թ. համաձայնության են եկել հրադադարի շուրջ, սակայն

[1] Կայքը վերջին մի քանի հոդվածների ավարտին նշում էր, որ Հայաստանը մեղադրում է Ադրբեջանին ռազմական գործողությունների և հրետակոծությունների համար, իսկ Ադրբեջանն իր հերթին մեղադրում էր Հայաստանին Ադրբեջանի ժողովրդի դեմ կրակ բացելու համար:

երբեք չեն կարողացել հասնել վերջնական կարգավորման: Արդյունքում, պարբերաբար բախումներ են բռնկվել Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի ու Հայաստանի սահմանի մոտ գտնվող տարածքներում: Երկու երկրների միջև մարտերը վերսկսեցին սեպտեմբերի 27-ին, երբ Թուրքիան աջակցեց (supporting) ադրբեջանական ուժերին, իսկ Ռուսաստանը (backing)՝ Հայաստանին: Ֆրանսիայի, Ռուսաստանի և ԱՄՆ նախագահները հինգշաբթի օրը կոչ արեցին վերադառնալ 1994թ. հրադադարին, սակայն Ադրբեջանի գլխավոր դաշնակից Թուրքիան մերժեց հրադադարի առաջարկը և փոխարենը կոչ արեց Հայաստանին դուրս գալ Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանից: Ուրբաթ օրը Հայաստանը հայտարարեց, որ պատրաստ է վերսկսել հրադադարի շուրջ բանակցությունները, սակայն մինչ այժմ Ադրբեջանը պատրաստ չէ դրանց» (Wilgenburg, *Kurdish journalist injured in Nagorno-Karabakh conflict).*

2020թ. հոկտեմբերի 7-ին հրապարակվեց ևս մեկ հոդված, որում կրկին նշվում է, որ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի մաս է կազմում, սակայն ղեկավարվում է Հայաստանի կողմից և վայելում Հայաստանի կառավարության աջակցությունը 1991թ. Սովետական Միության փլուզումին հաջորդած Հայաստանի և Ադրբեջանի անկախացումից հետո: Նշվում է, որ հոկտեմբերի 5-ին Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Ռուսաստանի արտաքին գործերի նախարարները համատեղ հայտարարություններ են տարածել՝ կոչ անելով հրադադար հաստատել: Նույն օրը, ըստ ԱՄՆ պետդեպարտամենտի խոսնակ Մորգան Օրտագուսի տարածած հայտարարության՝ պետքարտուղարի տեղակալ Սթիվեն Բիգունը առանձին հեռախոսազրույց է ունեցել Հայաստանի և Ադրբեջանի արտգործնախարարների հետ, սակայն հաջորդ օրը Թուրքիայի ԱԳՆ Մևլութ Չավուշօղլուն այցելել է Ադրբեջան և ճնշում գործադրել «անջատողական տարածաշրջանի» վրա վերահսկողություն հաստատելու համար, ինչպես նաև քննադատել ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և Ռուսաստանի՝ Եվրոպայում անվտանգության համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) Մինսկի խմբի համանախագահների դիրքորոշումը: Հոդվածագիրը դրան անդրադարձել է առանձին ենթավերնագրով՝ “Էրդողանի նեոօսմանյան փառասիրությունը (ambitions)”, տարածաշրջանում թուրքական միջամտությունը: Հետաքրքիր է, որ կայքը, հղում տալով Ամերիկայի ձայնին, գրել է, որ Լեռնային Ղարաբաղը հայտնվել է Էրդողանի տարածաշրջանային «փառասիրության» մեջ, որ Օսմանյան մեծությունն ու ազդեցությունը վերականգնելու ցանկության ունի: Հոդվածում ևս տեղ է գտել Էրդողանի կողմից Երուսաղեմը իրենցը համարելու մասին ելույթի բովանդակությունը: Հոդվածում հղում է տրված նաև Foreign Policy ամսագրին, ըստ որի՝ Թուրքիան Սիրիայից 1500 սիրիացի է ուղարկել Ադրբեջան: Ըստ ամսագրի՝ Սիրիայի ազգային բանակի (ՍԱԲ) հրամանատարները ժամանել են Ադրբեջան նույնիսկ մարտական գործողությունների սկսվելուց առաջ՝ «տարածաշրջանն ուսումնասիրելու և ադրբեջանական բանակի հետ զորքերի բաշխման վերաբերյալ տեղեկությունները համակարգելու համար»: Սիրիացիներին առաջարկվել են չորսամսյա պայմանագրեր՝ ամսական 1500 դոլարով, և ասվել է, որ նրանք «հիմնականում կզբաղեցնեն պահակակետերը»: Սակայն նրանք ակտիվ մարտական գործողությունների մեջ են եղել: Ըստ հոդվածի՝ Foreign Policy-ն նշում է, որ առանց որևէ ապացույց ներկայացնելու, Թուրքիան պնդում է՝ Հայաստանին Քրդստանի աշխատավորական կուսակցության (PKK)՝ աջակցության մասին (Mylroie, *US, France, Russia call for Nagorno-Karabakh ceasefire, but Turkey encourages Azeri offensive*):

Հոկտեմբերի 7-ին հրապարակված հերթական հոդվածներից մեկում “Kurdistan24” անվան տակ գտնվող հոդվածագիրը գրել է. «Ռազմական տեխնիկայի և հզորության տեսանկյունից Ադրբեջանն ավելի ուժեղ է, սակայն շատ հզոր երկրներ, այդ թվում՝ Ռուսաստանը և Ֆրանսիան, աջակցում են Հայաստանին: Այնպիսի երկրներ, ինչպիսիք են Թուրքիան և Իսրայելը, օգնում են Ադրբեջանին: Ասվում է, որ Իրանը Հայաստանի քաղաքական հենարանն է»: Հոդվածի վերջում հոդվածագիրը

գրում է. «Անցյալ երկուշաբթի Հայաստանի և Ադրբեջանի միջև պատերազմ սկսվեց: Պատերազմը Լեռնային Ղարաբաղի տարածքում է: Ղարաբաղի տարածքի մեծ մասը Քրդստանի պատմական ու իրավական[1] տարածքն է» (Kurdistan24, *Ermenistan û Azerbaycan hev bi kûştina sivîlan tometbar dikin*):

Այս և նմանատիպ եզրակացությունները թույլ են տալիս որոշակի պատկեր ձևավորել լրատվական գործակալության՝ հարցի նկատմամբ ունեցած դիրքորոշման մասին: Կայքում տեղադրված հոդվածները, որոնցում առկա են Թուրքիայի կողմից սիրիացի զինյալների տեղափոխման, Արցախում, Սիրիայում և Լիբիայում թուրքական ներգրավվածության մասին հայտարարություններ, կարելի է «զգուշացնող» ազդանշան համարել նաև քրդական ուժերի համար:

Պատահական չէ նաև 2021թ. հունվարի 29-ին Kurdistan 24 լրատվական կայքի հրապարակած հոդվածը, որը ներկայացնում էր Մարդու իրավունքների կազմակերպության զեկույցը, 2020թ. Սիրիայի հյուսիսային Աֆրինի շրջանում Թուրքիայի կողմից աջակցվող աշխարհազորայինների (Turkish-backed militias) և թուրքական հետախուզության կողմից 877 քաղաքացու ձերբակալության մասին: Սիրիայի «Ճշմարտություն և Արդարություն» կազմակերպության գործադիր տնօրեն Բասսամ ալ-Ահմադը Kurdistan 24–ին տված իր հարցազրույցում ասել է, որ 2020թ. վերջին երկու ամիսներին ձերբակալությունների թիվն աճել էր, սակայն այն նվազել է, երբ ապստամբ խմբերը կռվում էին Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանի և Թուրքիայի կողմից: Կայքը մեջբերել է. «Այսպիսով, եթե այդ խմբերը գնում են Ադրբեջան, նրանք ժամանակ չունեն մարդկանց ձերբակալելու, բայց երբ նրանք վերադառնում են Սիրիա, նրանց կրկին փող է պետք, և ձերբակալությունները (Աֆրինում) ավելանում են փրկագնի և գումարի դիմաց: Ցավոք, այդպես է»: Նա նաև նշել է, որ Թուրքիայի կողմից աջակցվող խմբերը օգտագործվում են քրդերի դեմ պայքարելու համար՝ փողի դիմաց փորձելով նրանց (քրդերին) վռնդել իրենց հողերից (Wilgenburg*, 877 civilians arrested in Syria's Afrin by Turkish-backed forces in 2020: Rights group*):

Պատերազմական դաշտից բացի տեղեկատվական պատերազմի համատեքստում այս կայքը, հանդիսանալով Էրբիլի երկու ներկայացուցչական լրատվականներից մեկը, պատերազմի ողջ ընթացքի և կարևորագույն լուրերի մասին հոդվածներ է հրապարակել՝ երբեմն նաև որոշ հետազոտողների և փորագետների կողմից արված մեկնաբանությունների հիման վրա, որոնցից էր 2020թ. հոկտեմբերի 21-ին հրապարակված հոդվածը, ըստ որի՝ և՛ Հայաստանի, և՛ Ադրբեջանի կողմից միմյանց հասցեին հնչող մեղադրանքների կիզակետում է հայտնվել «քրդական տարրը»: Հոդվածում զետեղված է «Կովկասյան ուսումնասիրությունների կենտրոնի» պրոֆեսոր Հասան Օքթանի մեկնաբանությունը, ըստ որի այս թեման և՛ Հայաստանը, և՛ Ադրբեջանը օգտագործում են որպես քարոզչություն միջազգային ասպարեզում լեգիտիմություն ցույց տալու համար և չեն ասում «ճշմարտությունը»: Նա նշում է, որ Հայաստանը, Բաշար Ասադի հայտարարության վրա հիմնվելով, հայտարարում է Թուրքիայի կողմից Սիրիայի ընդդիմադիր զինյալների՝ Ղարաբաղ տեղափոխման մասին, որով ցանկանում է գրավել Ռուսաստանի ուշադրությունը, քանզի այդ ջիհադիստական կազմակերպությունները մեծ սպառնալիք են Ռուսաստանի համար: Պրոֆեսորի խոսքերով Ադրբեջանն էլ իր հերթին է պնդում, որ Հայաստանը YPG-ի և PKK անդամներով է կռվում իր դեմ: Օքթանը այս պնդումները ուժերի կողմից մանիպուլյատիվ է համարում, քանզի իր խոսքերով ոչ մի ապացույց դեռ չեն ներկայացրել: Նույն հոդվածում ներառված է նաև Մոսկվայի համալսարանի փորձագետ Քերիմ Հասի ուսումնասիրությունները, որ նշել է, որ Ռուսաստանի և՛ նախագահը, և՛ արտգործնախարարը, և՛ հետախուզության ղեկավարը զգուշացրել

[1] «Իրավական», «օրինական» բառերի թուրքական տարբերակի՝ yasayî (թուրք. ՝ yasa օրենք, yasal օրինական, իրավական) կիրառությունից, կարելի է ենթադրել, որ հոդվածագիրը թուրքական քրդական համայնքի ներկայացուցիչ է (տե՛ս Ղազարյան, 2003):

էին Թուրքիային Լիբիայից և Սիրիայից Ղարաբաղ ջիհադիստներ ուղարկելու հետ կապված, բացի դա, ֆրանսիական և եվրոպական ՁԼՄ-ները ևս խոսում են այդ մասին, և դա անհերքելի է, իսկ ջիհադիստ զինյալները դարձել են Թուրքիայի համար արտաքին քաղաքականության գործիք (Erişmiş):

Վերոնշյալ հոդվածի հրապարակումից 2 օր անց կայքը հրապարակեց այս անգամ Ադրբեջանի նախագահի՝ Իրանի հետ սահմանի մի մասը գրավելու մասին հայտարարությունը հերքող ՀՀ ՊՆ պատասխանը (Kurdistan24, *Ermenistan daxûyaniyên Azerbaycanê red dike!*):

2020թ. հոկտեմբերի 27-ին (06:27) Kurdistan24-ը հրապարակեց «Ղարաբաղում 18 սիրիացի զինյալ է սպանվել» հոդվածը: Հղում տալով Սիրիայում ՄԻ մշտադիտարկման կենտրոնին՝ հոդվածագիրը գրում է, որ սպանվածների թվում է El Hamzat (Hamza Devision) խմբավորման առաջնորդը, և մինչ այդ պահը Թուրքիան ի աջակցություն Ադրբեջանի 1500 սիրիացի զինյալ է տեղափոխել պատերազմի տարածք (Kurdistan24, *Li Qerebaxê 18 çekdarên Sûrî hatin kuştin*):

Նույն օրը երեկոյան (20:00) կայքը հրապարակեց Թուրքիայի կոմից սիրիացի զինյալների՝ ռազմական գործողությունների պատրաստող ճամբարի վրա ռուսական ինքնաթիռների հարվածների մասին հոդվածը: Նշվում էր, որ այդ ճամբարի զինյալները ուղևորվում են Լիբիա, Ադրբեջան, Սիրիայի հյուսիս՝ ռազմական գործողություններին մասնակցելու: Հոդվածագիրը գրում է, որ “Faylaq al-Sham” (Սիրիական լեգեոն) կոչվող ճամբարում մարզված սիրիացի զինյալները, ըստ էության, կազմում են Թուրքիայի «արտասահմանյան լեգեոնը»: Հղում տալով Agence France Press-ին՝ նշվում է, որ “Faylaq al-Sham”-ը համարվում է «Մուսուլման եղբայրների» սիրիական ճյուղին մոտ, և որոշ փորձագետներ այն համարում են նրա ռազմական թևը: Հոդվածում նշված է, որ Թուրքիան Լիբիայի քաղաքացիական պատերազմում և հայ-ադրբեջանական հակամարտության մեջ Ռուսաստանի հետ հակադիր կողմեր են պաշտպանում, և որ Թուրքիան 2000 սիրիացի զինյալ է ուղարկել Ադրբեջան Լեռնային Ղարաբաղի վիճելի տարածքը Հայաստանից գրավելու համար, և չնայած Ռուսաստանը, ԱՄՆ-ն, ԵՄ-ն և ՆԱՏՕ-ն ձգտել են ապահովել հրադադար, դրանք բազմիցս խախտվել են, քանի որ Թուրքիայի աջակցությամբ ավելի ուժեղ դարձած ադրբեջանական ուժերը ուժեղացնում են իրենց հարձակումը (Mylroe, *Russia strikes camp of Turkey’s Foreign Legion, including fighters against Syrian Kurds*):

2020թ. հոկտեմբերի 30-ին North Press Agency սիրիական լրատվական գործակալությունը, հղում տալով տեղական լրատվամիջոցներին, հրապարակեց մի հոդված, որում նշված էր Թուրքիայի կողմից աջակցվող Համզա (Hamza) ընդդիմադիր խմբավորման երկրորդ առաջնորդի՝ Հուսեին Աբոյի սպանության, դրանից օրեր առաջ նաև խմբավորման կենտրոնական ուժերի գլխավոր հրամանատար Ադել Շահիրի սպանության մասին: Հոդվածում նշվում է, որ Թուրքիան շարունակում է սիրիացիների հավաքագրել Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանում կռվելու համար՝ ֆինանսական աջակցության դիմաց այնտեղի հասարակական բազաները պաշտպանելու պատրվակով: Կայքը հավելել է, որ Ադրբեջանի և Հայաստանի միջև վերջին ռազմական բախումը ամենադաժանն է 1990-ական թվականներից ի վեր՝ Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանի շուրջ վեճի ֆոնին (Khaled Al-Hassan):

2020թ. նոյեմբերի 1-ին Kurdistan24-ը հրապարակեց հոկտեմբերի 21-ին Սիրիայի ժողովրդավարական ուժերին (HSD) հանձնված 7 զինյալի մասին հոդվածը, որում նշված էր, որ, ըստ Սիրիայի ՄԻ մշտադիտարկման կենտրոնի, զինյալները հայ-ադրբեջանական պատերազմին մասնակցելու նպատակով Լեռնային Ղարաբաղ չուղարկվելու համար, հանձնվում են (Kurdistan24, *Çakdarên ser bi Tirkiye ve teslîmi HSD bûn!*):

2020թ. նոյեմբերի 14-ին նույն թեմայի շրջանակներում կայքը հրապարակեց «Դանիայի խորհրդարանը դատապարտում է թուրքական ագրեսիան Սիրիայի հյուսիս-արևելքում» վերնագրով հոդվածը: Հոդվածագիրը նշում է, որ Էրդողանը

միաժամանակ 3 ռազմական գործողություն է սկսել Սիրիայում, սիրիացի զինյալներ ուղարկել Լիբիայում՝ իսլամիստներին և Լեռնային Ղարաբաղում Հայաստանի դեմ՝ Ադրբեջանի կառավարությանը աջակցելու համար: Թեպետ հոդվածի բովանդակության շեշտը դրված է Թուրքիայի՝ Սիրիայում վարած քաղաքականության քննադատման ու ռազմական գործողությունների դատապարման վրա, սակայն հոդվածագիրը անտարբեր չի մնացել Լեռնային Ղարաբաղում հակամարտության վերաբերյալ արված հայտարարությունների նկատմամբ, ինչպես օրինակ՝ գրել, որ հոլանդացի 3 օրենսդիրներ կոչ են անում արտգործնախարար Ստեֆ Բլոկին՝ ճնշում գործադրել Եվրոպայի վրա՝ Թուրքիայի դեմ զենքի էմբարգո սահմանելու համար՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունում նրա ներգրավվածությունից հետո (Wilgenburg, *Danish parliament condemns Turkish aggression in northeast Syria*):

Kurdistan24-ի թերևս ամենահետաքրքիր հոդվածներից մեկը արցախյան թեմայի վերաբերյալ առնչվում է քաղաքական դիտորդ Աբդուլլահ Կիրանի հարցազրույցին, որը հրապարակվել է 2020թ. նոյեմբերի 16-ին: Ըստ Կիրանի՝ Ղարաբաղում տեղի ունեցած պատերազմական գործողությունները պայմանավորված են նաև հայ-ռուսական հարաբերություններով: Ըստ վերջինիս կարծիքի՝ «Ռուսաստանը պատժեց Հայաստանին, ինչպես արել էր Վրաստանի հետ, սա պայմանավորված է նրանով, որ Փաշինյանի իշխանությունը վերջին 3 տարիների ընթացքում փորձում է Հայաստանը մերձեցնել Եվրոպային և Ամերիկային» (Kurdistan24, *Kiran*):

Kuridstan24-ը հետագա մյուս հոդվածներով ցույց տվեց, որ ակտիվորեն հետևել է Արցախում տեղի ունեցող իրադարձություններին և տարբեր տեսակետներ արտահայտող հոդվածներ հրապարակել կուրմանջիախոս լսարանի համար և ոչ միայն: Հատկանշական է Թուրքիայի կողմից՝ ի աջակցություն Ադրբեջանին ԼՂ ուղարկված սիրիացի զինյալների մասին հոդվածները, որի մեջ ներառված են նաև ռուսական հետախուզության պարզած տեղեկությունները: Հոդվածագիրները տեղ են հատկացրել նաև Իսրայելից ՀՀ դեսպանին հետ կանչելու վերաբերյալ հայտարարություններին:

Կայքը հրապարակել է նաև 2023թ. Արցախում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ հոդվածներ՝ սկսած Ադրբեջանի կողմից Արցախի շրջափակումից, զոհերից, տեղահանման ճանապարհի պայթունից մինչև ռուս-թուրքական համագործակցություն Արցախի տարածքում, Ֆրանսիայի հետաքրքրվածություն: Ակնհայտ է, որ Kurdistan24-ը Արցախյան 3-րդ պատերազմի ողջ ընթացքում կուրմանջի բարբառով ակտիվորեն հրապարակել է ինչպես հայկական, ադրբեջանական կողմի հրապարակումները պարունակող հոդվածներ, այնպես էլ միջազգային հանրության արձագանքը ներկայացնող բովանդակությամբ մի շարք հոդվածներ:

Rûdaw

Rûdaw քրդական լրատվական կայքում Արցախյան թեմային առնչվող կուրմանջիով հոդվածները սկսվում են 2023թ. հուլիսի 18-ից, այսինքն՝ հնարավոր չէ ասել՝ կայքը հրապարակե՞լ է արդյոք հոդվածներ 2020թ. Արցախյան 3-րդ պատերազմի վերաբերյալ, թե՞ ոչ:

Անգլերեն միակ հոդվածը, որում անդրադարձ կար Արցախին, Լազգին Յաղուբի՝ Սիրիայի քրդերի ուղղությամբ թուրքական հարձակումների ակտիվացման մասին հոդվածն է, որտեղ նա նշել է, որ թուրքական անօդաչու սարքերը, որոնք նախկինում կիրառվել են Լեռնային Ղարաբաղում, Լիբիայում, Ուկրաինայում, վերջերս Սիրիայի հյուսիս-արևելքում մահացու հետևանքներ են թողնում: Հետաքրքրական է, որ հոդվածի վերջում նշվել է, որ հոդվածի բովանդակությունը Միջագետքի ժամանակակից պատմությունը հետազոտող, թարգմանիչ Լազգին Յաղուբի մտքերն

ու եզրակացություններն են, և պարտադիր չէ, որ արտացոլեն կայքի դիրքորոշումը (Rûdaw, *What drives Turkey's recent increased attacks on Syrian Kurds?*):

Rûdaw լրատվական կայքում թեմայի վերաբերյալ կուրմանջի բարբառով առկա է եղել 23 հոդված: Առաջին հոդվածը, որում ակնարկ կա Արցախյան հիմնախնդրի մասին, 2023թ. հուլիսի 18-ի՝ «Պատերազմն Ուկրաինայում ամրապնդել է Ադրբեջանի դիրքը համաշխարհային էներգետիկ շուկայում» վերնագրով հոդվածն է: Հոդվածագիրը ներկայացնում է, որ ռուս-ուկրաինական պատերազմի ֆոնին ռուսական գազի՝ դեպի Եվրոպա արտահանման նվազմանը զուգահեռ, եվրոպական երկրները փորձեցին ջերմացնել հարաբերությունները Ադրբեջանի հետ՝ ըստ այդմ մեծացնելով ադրբեջանական գազի պահանջարկը: Ըստ հոդվածագրի՝ ԵՄ-ն այդ պահին որոշում կայացրեց անմիջականորեն միջամտել հայ-ադրբեջանական խնդրին՝ խաղաղ կարգավորման նպատակով: Ըստ Խալիդ Ջամիլի՝ ԱՄՆ-ը ևս իր հերթին փորձեց հեռացնել այս երկրներում ռուսական ազդեցությունը, և սրանով է պայմանավորվում Բլինկենի կողմից Վաշինգտոնում երեք օրվա ընթացքում Ադրբեջանի և Հայաստանի արտաքին գործերի նախարարների ընդունելությունը (Mihemed):

Արցախյան ամբողջ համակարտության վերաբերյալ, սակայն, առաջին հոդվածը հրապարակվել է 2023թ. սեպտեմբերի 19-ին, որն իրենից ներկայացնում էր ԱՀ ՊՆ հայտարարությունը Ղարաբաղում գործողություններ սկսելու վերաբերյալ: Ըստ կայքի հոդվածի՝ ԱՀ ՊՆ հայտարարության մեջ նշվում էր, որ գործողության պատճառը հայկական ուժերի զինաթափումն ու դուրս մղումն է, և որ Թուրքիան և Ռուսաստանը տեղյակ են գործողության մասին: Հոդվածագիրը վերջում գրել է. «Ղարաբաղը միջազգայնորեն ճանաչված է որպես Ադրբեջանի մաս, բնակիչների մեծամասնությունը հայեր են: 1990-ականների պատերազմից հետո այն ընկավ Բաքվի վերահսկողությունից, նրա մի մասը Ադրբեջանը վերադարձրեց 2020թ. պատերազմից հետո (Rûdaw, *Azerbeycanê li herêma Qerebaxê dest bi 'operasyonê' kir*):

Հաջորդ հոդվածը վերաբերում է Եվլախում Ադրբեջանի և Ղարաբաղի ներկայացուցիչների հանդիպմանը. հոդվածում հղում է տրվել ինչպես ադրբեջանական, այնպես էլ հայկական ՁԼՄ-ներին, և հրապարակվել Ղարաբաղը զինաթափելու, մի քանի անձանց Ադրբեջանին հանձնելու, ՀՀ զինված ուժերին Ղարաբաղից դուրս բերելու և ադրբեջանական այլ պահանջերի, ինչպես նաև Նիկոլ Փաշինյանի կողմից Ադրբեջանի տարածքը 86. 6 հազար քառ. կմ՝ ներառյալ Լեռնային Ղարաբաղը, ճանաչելու մասին (Şeddadî):

Քրդական լրատվական այս կայքը 2023թ. սեպտեմբերի 23-ին հրապարակեց մի ռեպորտաժ հայ-ադրբեջանական պատերազմի մասին, որում անդրադարձ կար, այսպես կոչված, «Կարմիր Քրդստանին»: Լրագրողը ներկայացնում է Լաչինը որպես քրդաբնակ շրջան և «Կարմիր Քրդստանի» կենտրոն և նշում, որ տեղի քրդերը հաստատվել են Բաքվի շրջակայքում գտնվող բնակավայրերում, որոնցից մեկը Masazêr-ն է (ադրբեջաներեն՝ Masazır): Ըստ ռեպորտաժում նկարահանված մարդկանց, որոնք հանդես են եկել որպես Հայաստանից գնացած քրդեր, Ղարաբաղում Հայաստանի և Ադրբեջանի միջև պատերազմից հետո հայերը իրենց տեղահանել են: Հետաքրքիր է, որ հարցազրույց տվող կինը խոսում է ադրբեջաներեն, իսկ ռեպորտաժում ասվում է, որ նա Լաչինը լքած շատ քրդերի նման մոռացել է քրդերենը և ցանկություն հայտնել վերադառնալու Լաչին: Հարցազրույց տվողներից մեկը Ադրբեջանի քրդերի "Ronahi" միության (ներկայումս չի գործում հնարավորությունների բացակայության պատճառով) ղեկավար Զաբիթ Մեմեդովն է, որ հայտնել է, որ քրդերի մեծ մասը մոռացել է իր լեզուն, և մոռացության պատճառը քրդերի կողմից Ադրբեջանում տարբեր բնակավայրերում ապրելն է: Հոդվածի վերջում նշվում է, որ ադրբեջանական բանակը շարժվել է դեպի Շուշա (հայ.՝ Շուշի),

Քելբաջար (հայ. ՝ Քարվաճառ), Խանքենդի (հայ. ՝ Ստեփանակերտ) և Լաչինի (հայ. ՝ Բերձոր) շրջանի քրդական քաղաքներ, և որ, ըստ հաղորդագրությունների, Ադրբեջանի կառավարությունը նախապատրաստական աշխատանքներ է ձեռնարկում քրդերին և ադրբեջանցիներին այդ (կամ իրենց) շրջաններ վերադարձնելու համար (Herkî, *Azerbeycan û Ermenistanê şer kir*): Վերոնշյալ հոդվածում խոսքը գնում է Արցախի տարածքում գոյություն ունեցող և պատմության մեջ հայտնի 1923-1929թթ. Քրդստան Երկրամասի, ապա 1930թ. մայիս-հուլիս ամիսներին՝ Քրդստանի օկրուգի մասին (Թարվերդյան, 2022): Իսկ ինչ վերեբարում է Շուշի քաղաքին, դեռ 2020թ. հոկտեմբրի 30-ին ԼՂՀ նախագահ Արայիկ Հարությունյանի՝ Շուշի քաղաքը պաշտպանելուն ուղղված կոչի հայտարարությունը ներկայացրած հոդվածում հոդվածագիրը եզրակացնում է, որ եթե Ադրբեջանը գրավի ռազմավարական նշանակություն ունեցող Շուշի (նշված է Շուշա) քաղաքը, որը կապում է Հայաստանը Ստեփանակերտին (նշված է Խանքենդի), դա Ադրբեջանի համար պատերազմի սկզբից ի վեր կդառնա ամենակարևոր ձեռքբերումը (Kurdistan24, *Rêberê Qerebaxê*):

Հետաքրքիր է, որ Հերկին հրապարակել է «Ադրբեջանն ու Հայաստանը պատերազմեցին, քրդերը գաղթեցին» նույն հոդվածը նաև թուրքերեն՝ մի քանի ժամ տարբերությամբ, և հակիրճ պատմական ակնարկ ներկայացրել «Կարմիր Քրդստանի» մասին, իսկ վերջում նշել, որ այդ շրջանում 1926թ. մարդահամարի արդյունքերով ապրող բնակչության 71%-ը քուրդ է եղել, 26%-ը ազերի, 0. 7%-ը՝ հայ (Herkî, *Azerbaycan ve Ermenistan savaştı, Kürtler göç etti*): Հարկ է նշել, որ 1897թ. համառուսաստանյան առաջին մարդահամարի տվյալներով Ղարաբաղում ապրող հայության թիվը 106. 4 հազ. էր ամբողջ 128. 6 հազ. բնակչության թվից, սակայն, հարյուրակամյակների ընթացքում իսլամական տարրի գերակայությունը այդ տարածքներում, քրիստոնյաների տեղահանություններն ու պատերազմներում գերի ընկնելու փաստը, հայ բնակչության ակտիվ տեղաշարժերը, թյուրքախոս տարրի աճի ավելի բարձր տեմպը, նպաստել են, որ հայ բնակչության թիվը կտրուկ իջնի (Սարգսյան, *Լեռնային Ղարաբաղի բնակչության թվի շարժընթացը*):

Նույն հեղինակը նաև մի տղամարդուց վերցրած հարցազրուցի հիման վրա հրապարակել է հոդված, որտեղ նշում է, որ Բաքվում գրեթե չկա մի ընտանիք, որ հայ-ադրբեջանական բախումներից չունի զոհեր: Հոդվածում հարցազրույց տվող տղամարդը ներկայացրել է իր ընտանիքի պատմությունը, հոր, եղբոր, հորեղբոր մասին, որոնք իր խոսքերով նահատակվել են (şehît ketin): Ըստ նրա՝ իրենց գյուղում[1] զոհվել են նաև կանայք և երեխաներ (Herkî, Şerê Azerbeycan û Ermenistanê): Նման հոդվածից հետո կայքը սեպտեմբերի 28-ին հրապարակեց մեկ այլ հոդված, որը, կարծես, կայքի «դիրքորոշման հավասարակշռությունը և չեզոքությունը» մասամբ պահելու բնույթ էր կրում: Սակայն այստեղ, ինչպես նախորդ հոդվածներում, ադրբեջանցիների և քուրդ ներկայացող մարդկանցից վերցրած հարցազրույցների տեսանյութերն էին տեղադրված, նմանատիպ տեսանյութ առկա չէր (տեղադրված էր Գերմանիայում ապաստան հայցողների, այդ թվում՝ քրդերի մասին մի հոլովակ): Այս անգամ հոդվածի հիմքը Ղարաբաղից տեղահանության հետևանքով Հայաստանի Գորիս քաղաքում հաստատված 68-ամյա մի կնոջ հարցազրույցն էր, որ պատմել էր Ադրբեջանի կողմից Մարտակերտ քաղաքի ռմբակոծության, 2020թ. պատերազմում ամուսնու զոհվելու և ընտանիքին պաշտպանելու համար Ղարաբաղից դուրս գալու մասին՝ բացատրելով «Մենք չենք ապրի նրանց[2] հետ, քանզի գիտենք, թե ինչպես կվարվեն մեզ հետ: Սա նշանակում է կործանել, սպանել և պատուհաններից դուրս նետել մեր երեխաներին»: Հոդվածագիրը նշել էր, որ Ադրբեջանը թույլ չի տալիս

[1] Հավանաբար նկատի ունենալով Ղարաբաղի տարածքում:
[2] «Նրանց» ասելով՝ կինը նկատի է ունեցել ադրբեջանցիներին:

միջազգային դիտորդների մուտքը: Սակայն վերջում հավելել. «Չնայած 1991թվականից Ղարաբաղը անջատողական հայերի ձեռքին է, սակայն միջազգային հանրության կողմից ճանաչվում է Ադրբեջանի տարածքի մաս» (Rûdaw, Nagorno-Qerebax):

Rûdaw-ը պարբերաբար տեղեկություններ է հայտնել նաև սեպտեմբերի 25-ին Ստեփանակերտ-Ասկերան ավտոճանապարհին տեղի ունեցած բենզինի պահեստի խոշոր պայթունի մասին, հայտնել զոհերի, վիրավորների մասին: Թերևս կայքի հրապարակումների շարքում պակաս կարևոր չի եղել «2023թ. տեղի ունեցած կարևորագույն իրադարձությունների մասին» հոդվածը: Կարևորագույն իրադարձութունևներից են համարվել Սիրիայում, Թուրքիայում, Արևմտյան և Հյուսիսային Քրդստանում տեղի ունեցած երկրաշարժերը, Լիբիայի ջրհեղեղը, Իսրայել-Համաս, Ռուսաստան-Ուկրաինա և Լեռնային Ղարաբաղի պատերազմը: «Լեռնային Ղարաբաղի պատերազմ»-ի հատվածում գրված է. «Ադրբեջանը սեպտեմբերի 19-ին սկսեց հարվածել Լեռնային Ղարաբաղին: Տեղական իշխանությունները հանձնվեցին 24 ժամվա ընթացքում, և հայտարարվեց հրադադար: Հարձակումների հետևանքով 600 մարդ զոհվեց, իսկ տարածաշրջանի 120,000 բնակիչ գաղթեց Հայաստան (koçberî bûn): Արդարադատության միջազգային դատարանը կոչ է արել Բաքվին թույլ տալ Ղարաբաղի բնակիչներին «անվտանգ» եղանակով վերադառնալ իրենց տները: Միջազգային հանդիպումները անհաջող էին» (Rûdaw, *Sala 2023yan li cîhanê çi qewimî?*):

Rûdaw լրատվական կայքի հոդվածները դույզն-ինչ տարբերվում էին Kurdistan24-ի հոդվածներից, դրանք հասանելի էին 2023թ. -ից ի վեր և առավել ծավալուն էին:

Եզրակացություն

Այս աշխատանքում մենք իրականացրինք Իրաքյան Քրդստանի հիմնական լրատվամիջոցներում (Kurdistan24, Rûdaw) Արցախյան երրորդ պատերազմի ընթացքի և հաջորդած իրադարձությունների վերաբերյալ առկա հոդվածների մշտադիտարկում: Թեպետ կայքերը բազմալեզու են, սակայն մեր աշխատանքում ընդգրկվել են միայն անգլերենով և կուրմանջիով հրապարակված հոդվածների ուսումնասիրության արդյունքները:

Մշտադիտարկում անցկացնելիս նկատեցինք, որ հրապարակված հոդվածներում Արցախի Հանրապետության վերաբերյալ առկա չի եղել «չճանաչված պետություն» տերմինը, սակայն հարկ է նշել, որ կիրառվել է միայն Լեռնային Ղարաբաղ անվանումը: Ինչ վերաբերում է «չճանաչված պետություն» տերմինին, ենթադրաբար, սա, որպես ընդհանրություն դիտարկելով Իրաքյան Քրդստանի և Արցախի Հանրապետության միջև, որպես այդպիսին չի ներկայացվել:

«Ինչպես նախաբանում նշել էինք, այս լրատվամիջոցները հրապարակում են հիմնականում կառավարության իշխող ներկայացուցիչների՝ Բարզանիների և մասամբ Թալաբանիների քաղաքական ուղղությանը վերաբերող հոդվածներ: Ինչ վերաբերում է Թալաբանիների շահերը ներկայացնող PUKmedia-ին, ապա կայքում մեզ չհաջողվեց կուրմանջիով կամ անգլերենով Արցախյան հիմնախնդրին վերաբերող հոդվածներ գտնել: Կարելի է եզրակացնել, որ Թալաբանիների ներկայիս ներկայացուցիչները չեզոք դիրք են պահպանել՝ փորձելով խուսափել պատերազմի վերաբերյալ հրապարակումներից»:

Ասպիսով՝ ուսումնասիրությունը ցույց տվեց, որ քրդալեզու մամուլը, դրանք հովանավորող հասարակական-քաղաքական ուժերը հետաքրքրված են եղել Արցախյան պատերազմով, և մեդիան որպես միջոց ծառայել է ինչպես քրդալեզու լսարանի տեղեկացվածությունը ապահովելու, այնպես էլ որպես «ակնարկ» միջազգային հանրությանը տեսանելի դարձնելու այս հարցի նկատմամբ քրդական ուժերի ուշադրությունը և անուղղակիորեն ներկայացված դիրքորոշումը: Իսկ ինչ

վերաբերում է երկու կայքերի հրապարակումների տարբերություններին, ապա ակնհայտ է, որ Kurdistan24-ը և՛ հրապարակումների թվի, և՛ դրանց թեմաների ընդլայնվածության տեսանկյունից տարբերվում է Rûdaw-ի հոդվածներից, թեպետ վերջինիս հոդվածները ավելի ծավալուն են:

Հոդվածների մեծամասնությունում Արցախի տարածքի վերաբերյալ հոդվածագիրները պահպանել են չեզոքություն՝ խուսափելով այն հայկական կամ ադրբեջանական համարելուց: Մի շարք հոդվածների վերջում հոդվածագիրները ակնարկել են «Կարմիր Քրդստանի» մասին՝ ի ցույց դնելով դրա վերաբերյալ իրենց հիշողությունները: Անհրաժեշտ է շեշտել, որ պատերազմի ընթացքում Թուրքիայի կողմից սիրիացի զինյալներ ուղարկելու մասին հոդվածները բավականին շատ էին, և կարևոր է այն հանգամանքը, որ թուրքական գործողությունները հայերի նկատմամբ համեմատվել են քրդերի դեմ իրականացվող թուրքական ռազմավարությանը: Քրդալեզու մամուլը բարձրաձայնել է դրա մասին՝ ի հեճուկս թուրքական պնդումներին: Հոդվածներում համեմատվել է Թուրքիայի ներգրավվածությունը Արցախում, Սիրիայում և Լիբիայում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Թարվերդյան, Սաթենիկ. «Այսպես կոչված «Կարմիր Քրդստանի» վերականգնման փորձերը (1988-1992)». *Գիտական Արցախ*, h.13, N 2, Հուլիս 2022, էջ 248-263, doi: 10.52063/25792652-2022.2.13-248:
2. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, պաշտոնական կայք, http://www.parliament.am/deputies.php?sel=details&ID=1371&lang=arm. Մուտք՝ 10. 08. 2025:
3. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, պաշտոնական կայք. http://www.parliament.am/deputies.php?sel=details&ID=1365. Մուտք՝ 10. 08. 2025:
4. Ղազարյան, Սերոբ. *Թուրքերեն-հայերեն բառարան*. 2003:
5. Ստեփանյան, Ռուզաննա. «ԼՂ դատախազություն. Զինվորներից մեկին գլխատել են կենդանության օրոք». «*Ազատություն» ռադիոկայան*, 01 Հուլ. 2016, https://www.azatutyun.am/a/27832655.html. Մուտք՝ 10. 05. 2025:
6. Սարգսյան, Համլետ. *Լեռնային Ղարաբաղի բնակչության թվի և էթնիկ կազմի շարժընթացը XIX դարում*. https://artsakhlib.am/wp-content/uploads/2018/11/Sargsyan-Hamlet-Lernayin-Xarabax.pdf. Մուտք՝ 10. 05. 2025:
7. Курдоев, Канат К. *Курдско-русский словарь*. Государственное издательство иностранных и национальных словарей, Москва, 1960.
8. Al-Hassan, Khaled. “Second Turkish-backed Armed Opposition Group Leader Killed in Nagorno-Karabakh Battles”. *North Press Agency*. 30 Oct. 2020, https://npasyria.com/en/48994/. Accessed: 09.05.2025.
9. Angelov, Grudi. “Military Implications of the Nagorno-Karabakh Conflict: Tactics and Technologies.” *Information & Security: An International Journal*, vol. 51, Jul. 2022, pp. 49-55, doi.org/10.11610/isij.5104.
10. Bivainis, Andrius. “Multi-dimensional Assessment of the Second Nagorno-Karabakh War.” *Security and Defence Quarterly*, vol. 38, no. 2, 2022, pp. 51-61, doi: https://doi.org/10.35467/sdq/146180
11. Dadparvar, Shabnam and Saeed Azizi. “Exploring Turkey's Strategic Goals in Caucasus Region During the 2020 Nagorno-Karabakh Crisis.” *International Relations and Diplomacy*, vol. 8, no. 11, Nov. 2020, pp. 475-482, doi:10.17265/2328-2134/2020.11.002.
12. Davtyan, Erik. “Lessons that Lead to War: Foreign Policy Learning and Military Escalation in the Nagorno-Karabakh Conflict.” *Problems of Post-communism*, vol. 71, no. 1, pp. 26-36, 2024 doi.org/10.1080/10758216.2023.2183410.

13. Erişmiş, Vural. “Pispor: Tirkiye çekdarên Sûrî ji bo siyaseta derve bikar tîne”. *Kurdistan24*, 21 Oct. 2020, https://rb.gy/sbjt12. Accessed: 08. 05. 2025.

14. Gamaghelyan, Philip and Sergey Rumyantsev. “The Road to the Second Karabakh War: the Role of Ethno-centric Narratives in the Nagorno-Karabakh Conflict.” *Caucasus Survey*, vol. 9, no. 1, Jul. 2021, pp. 1-17, doi:10.1080/23761199.2021.1932068.

15. Hecht, Eado. “Drones in the Nagorno-Karabakh War: Analyzing the Data.” *Military Strategy Magazine*, vol. 7, no. 4, pp. 1-1, Jan. 2022

16. Herki, Şevket. “Azerbaycan ve Ermenistan savaştı, Kürtler göç etti”. *Rûdaw*, 23 Sep. 2023, https://www.rudaw.net/turkish/world/230920238. Accessed: 07 May 2025.

17. Herkî, Şewket. “Azerbeycan û Ermenistanê şer kir: Kurd koçber bûn”. *Rûdaw, 23 Sep, 2023,* https://www.rûdaw.net/kurmanci/kurdistan/230920232. Accessed: 07. 05. 2025.

18. Herkî, Şewket. “Şerê Azerbeycan û Ermenistanê: Ji malbata xwe 11 kes ji dest dane, naxwazin yê 12an jî bidin”. *Rûdaw*, 26 Sep. 2023, https://www.rûdaw.net/kurmanci/world/260920231. Accessed: 07. 05. 2025.

19. Hovsepyan, Levon and Tonoyan, Artyom. “From Alliance to ‘Soft Conquest’: the Anatomy of the Turkish-Azerbaijani Military Alliance before and after the 2020 Nagorno-Karabakh War.” *Small Wars & Insurgencies*, vol. 35, no. 4, 2024, pp. 622-655, doi.org/10.1080/09592318.2024.2312957.

20. Kurdistan24. https://www.kurdistan24.net/en/page/about. Accessed: 10. 08. 2025.

21. ---. “Çakdarên ser bi Tirkiye ve teslîmi HSD bûn!”. *Kurdistan24*, 01 Nov. 2020, https://www.kurdistan24.net/kmr/story/559175/%C3%87akdar%C3%AAn-ser-bi-Tirkiye-ve-tesl%C3%AEmi-HSD-b%C3%BBn!. Accessed: 08. 05. 2025.

22. ---. “28 çekdarên Sûrî di şerê Qerebaxê de hatin kuştin”. *Kurdistan24*, 01 Oct. 2020, https://tinyurl.com/4vvxwb3m. Accessed: 06. 05. 2025.

23. ---. “Ermenistan: Azerbaycanê fermandariya operasyonan radestî Tirkiyê kiriye”. *Kurdistan24*, 30 Sep. 2020, https://tinyurl.com/5n7k9yj6. Accessed: 06. 05. 2025.

24. ---. “Ermenîstan bo NATO: Tirkiye bi F-16'yan şerê me dike!”. *Kurdistan24*, 28 Sep. 2020, https://tinyurl.com/37xd37wt. Accessed: 06. 05. 2025.

25. ---. “Ermenistan daxûyaniyên Azerbaycanê red dike!”. *Kurdistan24*. 23 Oct. 2020, https://www.kurdistan24.net/kmr/story/558998/Ermenistan-dax%C3%BByaniy%C3%AAn-Azerbaycan%C3%AA-red-dike!. Accessed: 08. 05. 2025.

26. ---. “Ermenistan rexne li Îsraîlê dike”. *Kurdistan24*, 02 Oct. 2020, https://www.kurdistan24.net/kmr/story/558573/Ermenistan-rexne-li-%C3%8Esra%C3%AEl%C3%AA-dike. Accessed: 06. 05. 2025.

27. ---.“Ermenistan û Azerbaycan hev bi kûştina sivîlan tometbar dikin”. *Kurdistan24*, 07 Oct. 2020, https://tinyurl.com/5dfynv3h. Accessed 09. 05. 2025

28. ---. “Ilham Aliyev: Artêşa Azerbaycanê Madagiz ji Ermenistanê stand!”. *Kurdistan24*, 03 Oct. 2020, https://tinyurl.com/3ae7ztra. Accessed: 06. 05. 2025.

29. ---. “Ji Trump, Macron û Pûtîn bangaweziya Qerebaxê”. *Kurdistan24*, 01 Oct. 2020, https://tinyurl.com/msys9nbe. Accessed: 06. 05. 2025.

30. ---. “Kanada: Nabe Tirkiye çekên me ji bo karên xirab bikar bîne”. *Kurdistan24*, 02 Oct. 2020, https://tinyurl.com/3j6tshys. Accessed: 06. 05. 2025.

31. ---. “Kiran: Di şerê Qerebaxê de Rûsyayê Ermenistan ceza kir”. *Kurdistan24*, 16 Nov. 2020, https://tinyurl.com/45f89s49. Accessed: 07. 05. 2025.

32. ---. “ Li Qerebaxê 18 çekdarên Sûrî hatin kuştin ”. *Kurdistan24*, 27 Oct. 2020, https://tinyurl.com/4f4ptcfu. Accessed: 08. 05. 2025.

33. ---. “Macron: Mîlîtanên Suriyeyî şandine Qerebaxê”, *Kurdistan24,* 01 Oct, 2020, https://tinyurl.com/3kn68aw4. Accessed: 06. 05. 2025.

34. ---. “Macron: Siyaseta Tirkiyê li navçeyê metirsîdar e”, *Kurdistan24,* 30 Sep, 2020, https://tinyurl.com/4urad7dk. Accessed: 06. 05. 2025.

35. ---. “Parlementerê Ermenistanê: Kurd di şerê Azerbeycan û Ermenistanê de şehîd dikevin!”. *Kurdistan24*, 28 Sep. 2020, https://tinyurl.com/4ctu7t5z. Accessed: 06. 05. 2025.

36. ---. “Rêberê Qerebaxê: Hêzên Azerbaycanê tenê 5 kîlometre dûrî me ne”. *Kurdistan24*, 30 Oct. 2020, https://tinyurl.com/mr2pr62v. Accessed: 08. 05. 2025.

37. ---. “Rûstem Bakoyan: Tirkiye bi sûretê serbazên Azerbaycanê li dijî me şer dike”. *Kurdistan24*, 29 Sep. 2020, https://tinyurl.com/5n6wvf3r. Accessed: 06. 05. 2025.

38. ---. “Şerê navbera Ermenistan û Azerbaycan zirarê dide Tirkiyê”. *Kurdistan24*, 28 Sep. 2020, https://tinyurl.com/36e9dp57. Accessed: 05. 05. 2025.

39. ---. “Şerê Qerebaxê! "Tirkiye 10 hezar TL dide çekdarên Sûriyeyî"”. *Kurdistan24*, 03 Oct. 2020, https://tinyurl.com/5a3nn2vy. Accessed: 06. 05. 2025.

40. ---. “Têmûrê Xelîl: Rûsya hewl dide şerê Ermenistan û Azerbaycanê rawestîne”. *Kurdistan24*, 28 Sep. 2020, https://tinyurl.com/bde7bczk. Accessed: 05. 05. 2025.

41. ---. “VÎDEO–Ermenistanê dîmenên têkbirina helîkoptereke Azerbaycanê belav kir”. *Kurdistan24*, 10 Oct, 2020, https://tinyurl.com/34ck9zvx. Accessed: 06. 05. 2025.

42. Lantzov, Sergey. “The Second Karabakh War: Background, Causes, Consequences.” *Polis. Political Studies*, vol. 32, no. 3, pp. 96-107, 2022, doi: 10.17976/jpps/2022.03.08

43. “McCaul and Engel Statement on Turkey Actions Undermining NATO Alliance”. F*oreign Affairs*, 16 Dec, 2020, https://foreignaffairs.house.gov/press-release/mccaul-and-engel-statement-on-turkey-actions-undermining-nato-alliance/. Accessed: 03. 05. 2025.

44. Meibodi, Hosein Pourahmadi and Mahdi Feizollahi, “The Escalation of Tension in Nagorno-Karabakh and the Challenge of Iran's Regional Interests: 2020-2023.” *Journal of Central Eurasia Studies*, Vol. 16, No. 2, Apr. 2024, pp. 75-100, doi:10.22059/JCEP.2024.370397.450191.

45. Miarka, Agnieszka. “The 2020 Autumn War in Nagorno-Karabakh: Course and Implications for the Strategic Balance of Power in the South Caucasus Region.” *Asian Affairs*, vol. 52, no. 4, pp. 826-851, 2021, doi.org/10.1080/03068374.2021.1993050

46. Mihemed, Xalid Cemîl. “Şerê Ukraynayê pêgeha Azerbaycanê di enerjiya cîhanê de bihêztir kiriye”. *Rûdaw*, 18 Jul, 2023, https://www.rûdaw.net/kurmanci/world/180720232. Accessed: 08. 05. 2025.

47. Mylroie, Laurie. “Russia Strikes Camp of Turkey’s Foreign Legion, including Fighters against Syrian Kurds”. *Kurdistan24*, 27 Oct. 2020, https://tinyurl.com/449mbp6c. Accessed: 02. 05. 2025

48. Mylroie, Laurie. “US, France, Russia Call for Nagorno-Karabakh Ceasefire, but Turkey Encourages Azeri Offensive”. *Kurdistan24*, 07 Oct. 2020, https://tinyurl.com/33adx4se. Accessed: 02. 05. 2025.

49. Petrosyan, Margarit. “The Role of Non-State Actors in Modern Warfare: The Case of Syria and Nagorno-Karabakh.” *Journal of Balkan and Near Eastern Studies, Taylor & Francis Journals*, vol. 26, no. 2, pp. 149-163, Mar. 2024, doi: 10.1080/19448953.2023.2233364.

50. Rûdaw. https://www.rudaw.net/english/about. Accessed: 10. 08. 2025.

51. ---. “Azerbeycanê li herêma Qerebaxê dest bi ‘operasyonê’ kir”. *Rûdaw*, 19 Sep, 2023, https://www.rûdaw.net/kurmanci/world/190920232. Accessed: 07. 05. 2025.

52. ---. “Nagorno-Qerebax: Bi hezaran Ermeniyan berê xwe da Ermenistanê”. *Rûdaw*. 28 Sep. 2023, https://www.rûdaw.net/kurmanci/world/280920233. Accessed: 07 May 2025.

53. ---. “Nûçegihanên Rûdawê 2 xelat standin”. *Rûdaw*. 23 Nov. 2024, https://www.rûdaw.net/kurmanci/kurdistan/231120247. Accessed: 07. 05. 2025.

54. ---. “Sala 2023yan li cîhanê çi qewimî?”. *Rûdaw*. 28 Dec. 2023, https://www.rûdaw.net/kurmanci/world/281220233. Accessed: 07. 05. 2025.

55. Şeddadî, Kamîz. “Gotûbêjên di navbera Ermeniyên Qerebaxê û Azerbeycanê de dest pê kir”. *Rûdaw*, 21 Sep, 2023, https://www.rûdaw.net/kurmanci/world/210920233. Accessed: 07. 05. 2025.

56. Wilgenburg, van Wladimir. “877 civilians arrested in Syria’s Afrin by Turkish-backed forces in 2020: Rights group”. *Kurdistan24*, 29 Jan. 2021, https://tinyurl.com/7978kdwm. Accessed 09.05.2025

57. Wilgenburg, van Wladimir. “Danish parliament condemns Turkish aggression in northeast Syria”. *Kurdistan24,* 14 Nov. 2020, https://www.kurdistan24.net/en/story/383491/Danish-parliament-condemns-Turkish-aggression-in-northeast-Syria. Accessed: 03.05.2025.

58. Wilgenburg, van Wladimir. French Kurdish journalist injured in Nagorno-Karabakh conflict. *Kurdistan24*, 03 Oct. 2020, https://www.kurdistan24.net/en/story/383260/French-Kurdish-journalist-injured-in-Nagor no-Karabakh-conflict. Accessed: 01.05.2025

59. Ya'qoube, Lazghine. “What drives Turkey’s recent increased attacks on Syrian Kurds?”. *Rûdaw*, 01 Aug. 2022, https://www.rûdaw.net/english/opinion/31072022. Accessed: 08. 05. 2025.

WORKS CITED

1. Ghazaryan, Serob. T'urqeren-hayeren bar'aran. [Turkish-Armenian Dictionary] 2003 (in Armenian)

2. Hayastani Hanrapetut'yan Azgayin Jhoghov, pashtonakan kayq, [Official Website of the National Assembly of the Republic of Armenia] http://www.parliament.am/deputies.php?sel=details&ID=1371&lang=arm. Hasaneli e' 10. 08. 2025 (in Armenian)

3. Hayastani Hanrapetut'yan Azgayin Jhoghov, pashtonakan kayq, [Official Website of the National Assembly of the Republic of Armenia] http://www.parliament.am/deputies.php?sel=details&ID=1365. Hasaneli e' 10. 08. 2025 (in Armenian)

4. Kurdoev, Kanat K. *Kurdsko-russkij slovar'*. Gosudarstvennoe izdatel'stvo inostrannyh i nacional'nyh slovarej, Moskva. [*The Kurdish-Russian dictionary*. State Publishing House of Foreign and National Dictionaries, Moscow] 1960. (in Russian)

5. Sargsyan, Hamlet. *Ler'nayin Gharabaghi bnakchut'yan t'vi ev e't'nik kazmi sharjhy'nt'acy' XIX darum*, Hasaneli e' 10. 05. 2025 [*The Population and Ethnic Composition Dynamics of Nagorno-Karabakh in the 19th Century*]. (in Armenian)

6. Step'anyan, R'uzanna. «LGh dataxazut'yun. Zinvorneric mekin glxatel en kendanut'yan o'roq». *Azatut'yun R'adiokayan*. [“Artsakh Prosecutor's Office: One of the Soldiers was Beheaded while still Alive”. *Azatutyun Radiokayan*] 01 Hulis. 2016, Hasaneli e' 10. 05. 2025. (in Armenian)

7. T'arverdyan, Sat'enik. «Ayspes Kochvac' «Karmir Qrdstani» verakangnman p'ord'ery' (1988-1992)». *Gitakan Arcax*, , № 2(13), e'j 248-263. [“The Recovery Attempts of the so-called “Red Kurdistan” (1988-1992). *Scientific Artsakh*, № 2(13), pp. 248-263] 2022. (in Armenian)

THE KURDISH-LANGUAGE MEDIA COVERAGE OF THE THIRD ARTSAKH WAR (2020-2023) (Kurdistan24, Rûdaw)

SATENIK TARVERDYAN
Yerevan State University, Faculty of Oriental Studies,
Chair of Iranian Studies, Ph.D. Student,
Yerevan, the Republic of Armenia

This topic examines news articles published on the Kurdish-language websites regarding the Third Artsakh War and the events following it. We analysed the content of news websites' articles published in the Kurdish Northern Kurmanji dialect on the Third Artsakh war.

Central question is to study a content analysis of publications, conclusions by the authors of the news articles of the major news websites in Iraqi Kurdistan (Kurdistan24, Rûdaw) that have pro-Barzani and partly pro-Talabani strategy, and whether the reporters mentioned "Red Kurdistan", taking into account the fact that it had been located in the territory of Artsakh.

The methodological foundation of this research is based content qualitative analysis, critical discourse, semiotic analysis and comparative methods. The relevance of the research is defined by the importance of news articles regarding the military operations between Armenia and Azerbaijan taking place in the territory of Artsakh published in the Kurdish media, and this article is a study of those publications in the Armenian scientific field.

The study concludes that the Kurdish press continues to be interested in Armenia-Azerbaijan conflict in Artsakh, Turkey's involvement, the international community's attitude towards the issue, and to convey an opinion within media, as well as to provide some information on this topic to the Kurdish audience. In some articles, there was brief information about the so-called "Red Kurdistan" that existed in the territory of Artsakh during the Soviet Union. Although the Kurdish "autonomy" (1923-1929) was short-lived in history, the Kurdish media authors highlight and remind about it. The history of so-called "Red Kurdistan" continues to "remain alive" in the social and political discourse of modern Kurds.

Keywords: *The Kurdish-language news websites, the third Artsakh war, Nagorno-Karabakh, "Red Kurdistan", Syrian militants, Turkish intervention, Azerbaijan offensive, conflict, military operation.*

ОСВЕЩЕНИЕ ТРЕТЬЕЙ АРЦАХСКОЙ ВОЙНЫ В КУРДСКОЙ ПРЕССЕ (2020-2023) (Kurdistan24, Rûdaw)

САТЕНИК ТАРВЕРДЯН
соискатель кафедры иранистики факультета востоковедения
Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения

Целью данной статьи является рассмотрение статей, опубликованных в курдской прессе и посвященных Третьей Арцахской (Карабахской) войне и последовавшим за ней событиям. В статье представлены результаты мониторинга публикаций, выполненных на северном диалекте курдского языка — курманджи.

Для достижения данной цели была поставлена ключевая задача изучить содержание статей, опубликованных на основных новостных сайтах Иракского Курдистана (Kurdistan24, Rûdaw) и выводы авторов статей с учётом пробарзанийской и отчасти проталабанийской направленности этих ресурсов. Одной из задач также является изучение того, в какой степени в этих публикациях упоминается «Красный Курдистан», учитывая его историческое расположение на территории Арцаха.

Методологическую основу исследования составляют качественный анализ контента, критический дискурс, семиотический анализ и сравнительные методы.

Актуальность данной работы обусловлена тем, что курдские СМИ внимательно следили за военными действиями, происходящими в Арцахе, и активно публиковали информацию, а данная статья представляет собой исследование этих публикаций в армянской научной сфере.

В ходе исследования мы пришли к выводу о том, что курдская община продолжает интересоваться армяно-азербайджанскими столкновениями на территории Арцаха, вовлеченностью Турции, отношением международного сообщества к этому вопросу, а также доносить определенное мнение на уровне публикаций в СМИ, а также предоставлять информацию по этой теме курдской общине. В некоторых статьях, кратко описывается так называемый «Красный Курдистан», существовавший на территории Арцаха во времена Советского Союза. В них также отмечается, что, хотя курдская «автономия» (1923-1929) просуществовала недолго в истории, информация о ней подчёркивается и напоминается и продолжает «оставаться живым» в общественном и политическом дискурсе современных курдов.

Ключевые слова: *курдские новостные сайты, третья Арцахская война, Нагорный Карабах, «Красный Курдистан», сирийские боевики, турецкая интервенция, наступление Азербайджана, конфликт, военная операция.*